

86. Զարմանք իմն են երգեցիկս համարել քերթողաց զկարապս, և մանաւանդ ողբաձայնս 'ի մահուն, որ ամենեկին 'ի կեանս և 'ի մահու համելքն են: Տիտիրոս աստ ընդ հովիւս աներաժիշտս համարի:
87. Աւել լէսպացի 'ի լութիմնոյ քաղաքէ Լեսքեայ կղզւոյն, քնարահար և տաղասաց անուանի: Սա արուեստին ճարտարտւթեամբ մեծացեալ յիտալիս, իբրև գառնայր 'ի Կորնթոս առ Պերփանդը արքայ՝ որում սիրելին էր յոյժ, յընչափաղ նաւաստուոյն ընկեցաւ 'ի ծով. բայց մի 'ի գլխաց, որ քաղցրութեամբ երգոց նորա զմայիեալն էր, առեւլ տարաւ զնա ՚ի Տեհնար աւան Լակոնիոյ. քանզի առասպելն սիրել դլինաց զերաժառութիւն:
66. Զայս ամենայն պատուիրէ վշուկ Ալփինիբէ նաժատին իւրում Ամարիլիւայ:
67. Զողանիճ, որով իմա և զայլ ամենայն բանջար խոտոյ. 'ի կիր արկանեին մողք և վշուկը 'ի գիւթութիւնս և 'ի կախարդանս:
71. Համարէր 'ի հնումն առ հեթանոսս կարել կախարդաց իջուցանել յերկնէ յերկիր զլուսին, կամ զգոյն նորա փոխել յարիւն. որպէս և մերոյս Եզնիկայ յիշատակեալ 'ի Գ. 217. եղծանէ և հելքէ զայս մոլար կարծիս:
72. Կիրէ գուստը արեգական և Պերսեայ յաւէրժարուին, քոյր Այիտայ արքային կողքեցւոց, և մայր Մեգեայ: Սա ըստ առասպելաց՝ զօրութեամբ դեղզոց և 'ի հարուած ցպոյն 'ի գաղանս փոխեր զմարդիկ. այսպէս և զընկերս Ոդիսեայ փոխեաց 'ի խոզս:
77. Պիւթագորեանք 'ի թիւս դնէին զհամագոյից հաստատութիւն, և հզօրագոյն 'ի թիւս համարէր ռամիկն զկոճատ կամ զանդոյդ: Վասն որոյ և զհօտս անդէոց և զգունդս բանակաց անզոյդս առ նէին: Խոկ աստ անզոյդ թիւս իմանի երեսակն գերագոյն 'ի թիւս. զի ըստ Արիստոտելի և ըստ Պլուտարքեայ՝ բովանդակէ զսկիզբն զմէշ և զկատարած, և զի գարձեալ սովլս զօրութիւնք դիցն երկնաւորաց և սանդարամետականաց բացատրին. քանզի երբեակ 'ի ձեռքին Արամազդայ նկարին շանթք, և Պիսիդոնի երեքարձէն գաւազան. և Պլուտոնի երեքգլիխ շուն. Պարկայք երեք. Գորդովանք ժանաք դժոխոց երեք: Ըստ այսու և Արտեմեայ եռագիմակ էին պատկերք, և անուն էր յերկիր Անահիտ կամ Արտեմիս, յերկին լուսին, և 'ի Սանդարամետս Նկատէ. յոր թուի աստ ակնարկել բանս՝ Աստած իննին 'ի նիւ համար է ըստաճաշէւլ:
79. Թելս իննեակ պատուիրէ շարամանել, երիս սպիտակս, երիս կարմիր, և երիս սեաւ. և 'ի միտաբին զայնոսիկյերիս հանդոյցս կապել ասելով. զիւսեմ զօդ Աստղեան, որ էր ձեւ կախարդանացն:
84. Քանզի աղանձ կամ մուրկ զզոհիւք ածէին, այսպէս պատուիրէ առնել և զպատկերաւն Դափնեայ իր զոհելոյ 'ի գիւթականն բագնի:
94. Ի գիւթութիւնս 'ի կիր առնուին զգիսակս կամ զհանդերձս այնորիկ՝ զոր գիւթելն կամեին. վասն որոյ վհուկս աստ զդրաւականս սիրոյ թողեալս 'ի Դափնեայ թաղէ առ սեմովքն, առ ՚ի ձեւ զնա անդր:
97. Պանտու գաւառ փոքուն Ասիոյ, որում սահման է 'ի հիւսիսոյ եւքսինեանն ծով, և յարեւելից կողքիս, յորս առաս գիւլոք են թիւնից: Ի Պանտու թագտուրեաց Միհրդատ՝ որ թունիւք կերակրէ, և 'ի Կողքիս ծնեալ էր Մեգեա՝ գեղատու հռչակաւոր:
111. Պատմէ Պլուտարքոս, զի յորժամ Տերենտիա կին Կիկերոնի զոհ մատուցանէր դից, սոյն գեպք պատահեցին՝ բոց 'ի մոխրոյ ցոլանալ, և Եստեանք զայն պարաւութեանն կատիլինայ ցոյց բարենշան համարեցան:
112. Հիւստու անուն շանն, որոյ հաջլւն նշանակ էր գալստեանն Դափնեայ:

Գաղղիա:

Ի յսպիսի մեծազօր և աշխարհաքաւող տերութեան մը վրայ թէպէտ փափաքելի էր մեզի քիչ մը աւելի ընդարձակ ոձով խօսիլ և ընթերցողաց գովելի հետաքննութիւնը գոհ ընել, սակայն Ի ազմավլիպիս անձուկ էջերը կը ստիպեն զմեզ մեր և ընթերցողաց փափաքը չափաւորել բռնած ոձերնուս համառօտագրութենէն չխոտորելու համար. որովհետեւ վախճաննիս ուրիշքան չէ եթէ ոչ պարզ ու անպահոյշ կերպով մը տէրութեանց աշխարհագրական դիլքն, վախառականութեան

ու արուեստից մէջ ունեցած յառաջադիմութիւնն ըստ կարի համառօտիւ մը ընթերցողաց առջելը դնել. ևս առաւել որ այս տարիներս Խւրոպիոյ անկարձելի յեղափոխութիւններով նորանոր փոփոխութիւններ կը պատահին, որով տէրութիւն մը իր սահմանները կ'ընդարձակէ՝ ուրիշ մը կ'ամփոփէ, և շատերն ալ տժրտամ վիճակի մը մէջ անհամբերաբար ապագայ ըլլալիքներուն կը սպասեն: Դաղղիա, ինչպէս զիւտեն ընթերցողք, այս տարի երկու գեղեցիկ ու բազմաժաղովուրդ գաւառներ իր տէրութեանը հետ միացուց՝ այն է՝ Կիցցան և Ալվոյիան: Արդ այսպիսի պարագայից մէջ մենք մասնաւորի լինջ

նալով՝ ընդհանուր տեղեկութիւն մը
միայն տալու գոհ կ'ըլլանք :

Դաղղիոյ սահմանն է հիւսիսէն
Ո'անչ ու Գալէի նեղուցը . արևելքէն
Պեղիա , Պատէնի դքսութիւնը , Հե-
լուետիա և Արդենիա . Հարաւէն Ո'ի-
ջերկրական ծովն ու Ապանիա . իսկ ա-
րևմուտքէն Խոլանդեան ովկիանոսը :

Ա'յնայ բարեխառն գօտիի տակ և կը
ձգուի հիւս . լայն . 42° մինչև 51° և
արևելեան երկայն 5° մինչև 7° արև-
մուեան երկայն . ըստ միջօրէին Բարի-
զու : Բոլոր շրջապատը 4,692 հազա-
րամէդր է , որուն 2,452 ծովասահման
է , և 2,240 է երկրասահման : Խողիա-
նուր տարածութիւնն է 52,768,618
քառ . հարիւրամէդր , և կամ 527,686
քառ . հազարամէդր . Խողարձակու-
թեան կողմանէ Դաղղիա Խարոպիոյ
հինգերորդ տէրութիւնը կը սեպուի .
Ուստաստան , Շուէտ , Խոտրիա և
Դերմանիա քան զինքը ընդարձակ են :
Դաղղիա քովի սահմանակից ծովերուն
մէջն ալ այլ և այլ կղզիներ ունի՝ ինչ-
պէս Ո'իջերկրականին մէջ Լորսիկա
կղզին , Լերենեան , Հիերեան կղզինե-
րը , Բոմէկ և Ուադոնո կղզիներն ալ
դէմ յանդիման Ո'արսիլիոյ : Լասգո-
նիոյ ծոցին և Խոլանդեան ովկիանոսին
մէջ են (Յէրոն կղզիները , Լաքս , Իէ ,
Ո'ատամ , Տիէօ , Լուարմուդրէ , Հուա ,
Հօէտիք , Պիէլիլ , Լրուա և Լիէնան
կղզիները և այլն : Ո'անչի ծովուն մէջ
Ջեռսէ , Լեռնարի և (Յրինեի կղզի-
ները : Խոսնք բոլորն ալ Դաղղիոյ բո-
լորտիքը կը շրջապատեն՝ որոնցմէ ոմանք
ամուր բէրդէր են , և ոմանք ալ շատ
նշանաւոր եղած , ինչպէս Լորսիկան՝ ո-
րուն գլխաւոր քաղաքը Խաչիոյ 11,000
բնակիչ ունի և հոս ծնաւ Ո'եծն Խա-
րոլէն Պոնաբարդէ , յամին 1769 , օ-
գոստոս 15 :

Խշարհքիս առաջին կարգի բազմա-
մարդ երկիրներէն մէկը կը սեպուի
Դաղղիա , և ամէն տարի երթալով ա-
շելու վրայ է ինչպէս հետեւել ցուցա-
կէն ալ կը տեսնուի .

Ամ.	Բնակչութ.
1700	19,669,320
1762	21,769,163
1788	24,676,000
1790	25,065,000
1801	27,343,003
1806	29,107,425
1820	30,451,187
1831	32,560,954
1836	33,540,910
1841	34,230,178
1846	35,401,761
1851	35,783,170
Խակ ըստ 1856 յետին աշխարհագրին բոլոր Դաղղիա ունէր 36,039,364 բնա- կիչ . բայց հիմա հաւանականաբար 37 միլիոնէն աւելի պիտի ըլլայ :	
Խրդ ըստ վերոյգրեալ ցուցակիս 1801 ինչուան 1846 Դաղղիոյ բնա- կիչը ամէն տարի աշեր է իւրաքանչիւր հարիւր հազարին 646 հոգի . իսկ 1836 ինչուան 1851 աշեր է իւրա- քանչիւր հարիւր հազարին 445 հոգի . որով 50 տարուան մէջ աճածը մէկտեղ առնելով միջին հաշուով 616 հոգի կ'իյ- նայ ամէն մէկ տարուան . ուստի եթէ աս համեմատութեամբ բազմանալու ըլլայ՝ 1900 ին Դաղղիոյ բնակիչը 58 մի- լիոն պէտք է որ ըլլայ . իսկ հիմակուան վիճակին նայելով Դաղղիա իրեն բազ- մամարդութերը երրորդ տէրութիւնը կը սեպուի յետ Ուուաց և Դերմանիոյ . Իմէն մէկ քառակուսի հազարամէդրին 68 հոգի կ'իյնայ , և աս նկատմամբ ին- ներորդ մարդաշատ աշխարհին է :	
1856 տարւոյն հաշիւներուն նայելով Դաղղիոյ ժողովուրդը ըստ վիճակի կե- նաց ասանկ կը բաժնուի :	
Երկրագործք	20,351,628
Գործառք	2,344,371
Հասարակ արուեստաւորք	7,818,144
Ազատական արուեստաւորք	3,991,126
Ծառայք	753,505
Զանազանք	780,590
	36,039,364

Դաղղիացւոց ազգին բուն նախա-
հարքը են կեղաք՝ որոնք Երորդ դարէն

մինչեւ թերորդ գար քանի մը բարբարոս ժողովուրդներու հետ միանալով՝ և մասնաւորապէս Փրանկաց՝ որ երկիրն ալ իրենց անուամբը Փրանկիա կամ Փրանք անուանեցին, որ ազատ ըսել է, ձևացաւ հիմակուան Գաղղիացոց ազգը: Գաղղիացիք Հռովմայեցոցմէ առաջ եկած են և Հռովմայեցի ժողովուրդ կը սեպուին քան թէ Գերմանական. ինչպէս յայսնի է նաև լեզուներնէն՝ որ անմիջապէս լատինէն ծագած է. և թէպէտ քանի մը Գերմանացի սակաւաթիւ ժողովուրդներ միջին դարու մէջ Գաղղիա գաղթեցան, բայց ասոնք քիչ ատենէն երկրցոց հետ միանալով ազգութիւննին կորսընցուցին: Եվրայ այսր ամենայնի Ալզասիո և Ուենայի բնակիչները մեծաւ մասամբ Գերմանացի են, և են ընդ ամէնը իբր 4,500,000. Հասարակ ժողովրդեան լեզուն Գերմաներէն է՝ թէպէտ և Գաղղիարէն ամէնքն ալ գիտէն: Արետոնք կամ Լալէսի երկրէն սերածները են իբր 4,800,000: Պասք՝ որ Պիրենեան լերանց ստորոտները կը բնակին ոչինչ աւելի են քան զօնութիւն: Իբր 235,000 Խտալացի՝ աւելի Արովմանս և Կորսիկա կղզւոյն մէջ. և ասոնց լեզուն Խտալերէնի ու Գաղղիարէնի խառնուրդ մընէ: Այսուցմէ դուրս կան երկու ուրիշ թափառական ժողովուրդներ ալ իբր 70,000⁶ չափ Հքէայ, և 6,000 ալ Գընչու:


Գաղղիացոց լեզուին հանգամանացը և կազմութեանը վրայ խօսելիս աւելորդ է, որովհետեւ արդէն ընդհանուր և ամենուն ծանուցեալ լեզու մը դարձած է հիմա. ազգին բնաւորութիւննը ու պանծալի մատենագրութիւնը ամենուն սիրելի ըրած են զայն՝ և ոչ միայն վաճառականութեան մէջ միակ քանուկ լեզուն է՝ այլ և Խւրոպիոյ խիստ շատ ալքունիք Գաղղիարէն կը խօսին և տէրութեանց մէջ եղած յարաբերութիւններն ալ նոյնպէս Գաղղիարէնով կ'ըլլուին: — Անչպէս ամէն լեզու և ազգ՝ այսպէս նաև Գաղղիացիք ալ ունին իրենց գաւառական լեզուները մէկ-

մէկէ զգալի զանազանութեամբ, այնպէս որ Գաղղիացի մը եթէ կիրթ չըլլայ նոյն լեզուաց մէջ՝ անկարելի է որ հասկընայ՝ և կամ շատ դժուարաւ: Այս վերջի երեսուն տարուանս մէջ շատ ջանք եղած է տէրութեան կողմանէ գարոցներու ձեւքով մաքուր Գաղղիարէնի վարժեցընել բոլոր ազգը. և թէպէտ՝ ի սկզբան մեծ ու յանդուգն ձեռնարկութիւն մը կը թուեր ասիկայ, բայց իմաստուն կառավարութիւնն և անխոնջ ջանքը կրցաւ յաղթել ամէն դժուարութեանց և յուսացուածէն շատ աւելի արդիւնք տեսնուեցաւ. և հիմա թէպէտ և նոյն գաւառական լեզուները խափանած չեն՝ բայց ամէն մարդ մաքուր Գաղղիարէն կը հասկընայ և կը խօսի:

Դնական դէր և սահմանագործութիւն: — Գաղղիա անկանոն վեցանկիւնի մը կը ձևացընէ և իւրաքանչիւր անկիւն մէյմէկ գլխաւոր սահմանագլուխ կը կազմէ: Հիւսիսային կողմի երկիրները ընդհանրապէս ցած ու հարթածաւալ են, նուազ բարեբեր քան զհարաւային մասունս՝ թէպէտ և երկրագործութիւնը վերջի աստիճան յառաջացած: Գաղղիայ այս մասիս մէջ ամենէն մեծ լեռները փոքրիկ բլուրներ են ասդին անդին ցանուած. բայց հարաւային կողմերը լի են մեծամեծ լեռներով՝ ինչպէս Ալպեանց գօտիներն և Պիրենեան լեռները որ ընդհանուր անուամբ: Առզէու կը կոչուին: Այս լեռներուս ամենէն բարձրն է Ալպին լեռը 12,673 ոտք բարձր որ Ալպեանց գօտիներուն մէջ կ'ինայ: Օ արմանալի նախախնամութեամբ մը այս լեռներս իրենց գրիւքը, որ մինչեւ Գաղղիոյ միջնաշխարհը կը ձգուին, երկրին գլխաւոր հարստութեանցը սկզբնապատճառքն են. վասն զի ասոնցմէ բլիսած բազմածիւղ գետերը կիսով չափ հարաւ և նոյնչափ մ'ալ հիւսիս ընթանալով բոլոր երկիրը կ'ուոգանեն, թող մարդկային ձարտարագործ հնարքներով նոյն գետերուն ջուրը հեռաւագոյն տեղեր անդամ հասցնե-

ԴԱՂԱԿԱՆ ԳԻՒԹԱԿԱՐ ԼԵՐԱՆՑ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆԸ

ՈՎԿԻՄՆՈՍԻՆ ԵՐԵՍՔՆ ԱՌԱՋ



ԱԼՓԵԱՑՔ

ա Սպիտակ լեռն.

ԳԱՂԱՅԱԿԱՆ ԱԼԳԵԱՑՔ

1 ԲԵԼՎՈՎՐ.

2 ՎԻԶՎ.

3 ՕՀԱՆ.

4 Մաւրինեան լեռն.

5 Լեռն Ժընեւա.

Ա. Պարանց Սէքսայ.

ՊԻՒՐԵՆԵԱՑՔ

բ ԿՈՒԹՈ կամ Մալատեդդա.

6 Կորուսեալ լեռն (Mont-Perdu).

7 Սիլէնոր.

8 Սար Հարաւոյ (Pic-du-Midi).

9 Մուն.

10 Քանիկու.

11 Մաղէկիւ.

12 Պերկոնք.

Բ. Նաւահանգիստ 0դյ.

ԿՈՐՍԻԿԱ.

13 Ռոդոնտայ.

14 Օրոյ.

Սէվէնք

15 Բիւյ-տը-սանսի.

16 Գանդալ.

17 Բիէս-սիւլ-օդը.

18 Մելչէն.

19 Ժէրափիէ-տը-ժոն.

20 Լոզէռ.

21 Բիւյ-տը-ծօմ.

22 Լեռն Դարար.

ԵՌԻՐԱ

23 Ռէրիւլէ.

24 Գոլոմզիս.

25 Լանսոնդ.

26 Շալամ.

27 Մեծ Ցուլ (Gros-Taureau).

28 Լեռն Շադու

29 Լեռն Լարայ.

ՎՐԴԵՍԵԱՆՔ

30 Օդապարիկն Սուլցայ.

31 Հոնա.

32 Օդապարիկն Լիւրայ.

33 Մեծն Տաննոն.

34 Դասըլյ.

35 Լեռնագաշտակն Լանկրայ.

36 Լերինք Արէայ.

37 Մեաւ Լերինք.

լով բոլը երկրին շահաւէտ և օգտակար բեղմնաւորութիւն մը կը պատճառ ուն : Այս ջրանցքները մեծաւ մասամբ 1790էն վերջը շինուած են, բայց նշանաւորն և ամենէն մեծ ջրանցքն է արքունական ըսուածը որ | ուդ . ԺԴէն ժամանակը շինուեցաւ ու Վիջերկրականը Վալանդեան ովկիանասին հետ կը միացնէ Կառան գետին ձեռքսվը . այս ջրանցքիս երկայնութիւնն է 50 փարսախ , վրան 72 կամուրջ ունի և 55 ալ քովրնտի զանազան ջրագարձներ : Ուստի բոլոր Գաղղիա 212 նաւարկելի ուղի ունի թէ գետ ըլլայ և թէ ջրանցք՝ որոնց բոլորին երկայնութիւնը կը հասնի 9,200 հազարամէջը : — Գաղղիա մեծամեծ ու փոքր գետեր շատ ունի՝ ինչպէս ըսինք . բայց մենք զիսաւորները միայն յիշելով զանց կ'ընենք մանրերը : Վալանդեան ովկիանոս կը թափին Վառը և Վիռոնտ գետերը որ Վառնիոյ Վառն ձորէն կը բղխեն . ինչպէս դարձեալ | ուառ , Վարդ , Վիլիէ , Վէվոր , Վառանդ և Կառոն գետերը : Վիջերկրական ծով կը թափին Վառն կամ Հասդանոս ամենի ու սրարշաւ գետը՝ որ Հելուետիոյ մէջէն կը բղխէ և Շինէվրայի լծէն անյնելով զանազան թեեր բաժնուած կու գայ ծով կը թաւալի . նոյնպէս () առ , Հէռոյ և Վարդ գետերը . աս ետքինս Վալեան լեռներէն կը բղխէ և կ'անցնի 'ի Վարդենիա : Խոկ Վէն գետը կը թափի Վանշի ծովը՝ որն որ իր ընթացիցը մէջ զանազան ստուար երակներ կ'արձեկէ իր քովերէն արարէից և անդաստանաց արբուցմանը համար . դարձեալ նոյն ծովը կը թափին () ապ , Վառնը , Խօն , Խօռ և Վոմ գետերը : Խան դարձեալ ուրիշ քանի մը գետեր ալ որոնք Գաղղիայ մէջէն բղխելով ուրիշ աշխարհներ կ'ընթանան , և են Վագոյ , Վէօզ , Վալա , Վոզէլ , Վէօրդ , Վաար , Հուենոս որ Հելուետիայէն կը բղխէ և Գաղղիայ մէջէն անցնելով կը մտնայ Վառին նահանգաց մէջ և անկէ կը թափի հիւսիսային ծով : — Օ անց կ'ընենք լծերու վրայ խօսիլը որոնցմէ քիչ ունի Գաղղիա և

նշանաւոր չեն . հոս միայն անուննին տալով կը բաւականանանք : Առան-| իէօ (ստորին | ուառայ նահանգին մէջ) . Աէն-Բուէն (Տուպ նահանգին մէջ) . Բալատրիւ (Խաէռ) . Վալօս (ստորին Վալպեայ մէջ) . Կանդուա (Խն) . ևն : Բաէրդ . — Գաղղիայ մակերեսոյթը որ 53 միլիոն հարիւրակալ կամ քառ . հարիւրամէջը է , ասանկ կը բաժնուի . 41,850,000 հարիւրակալ բերրի երկիր , որուն 25,500,000 մշակելի . 4,830,000 հարիւրակալ մարդագետին . 2,130,000 հար . այգեստան . 640,000 հարիւրակալ զանազան բուրաստանք և Ճեմելիք . 950,000 հարիւր . այլ և այլ բանջարեցէններով մշակեալ . 7,800,000 հարիւր . անտառ և ծառաստան . 7,799,000 հարիւրակալ անհակելի կամ անպիտան երկիր . 2,920,600 հարիւրակալ ձանապարհք , գետք , ջրանցք , լիճք և տունք , և այլն : Գաղղաւոր բերքերն են՝ ցորեն , հաճար , եզիպտացորեն և սեացորեն , վարսակ , գարի , գետնախնձոր , տեսակ տեսակ ընտիր և անուանի գինիներ , խնձորի ու տանձի օշարակ , մետաքս , կանեփ , կտաւ , հուպլոն բոյսը , ծխախոտ , օգտակար արմատներ ներկի և իւղը ու բժշկական խոտեր . դարձեալ նշի , կիտրոն , նարինջ , փուստղ , ձիթենի՝ մանաւանդ Բրովանս գաւառին մէջ՝ ուսկից ելած իւղը զրեթէ կարագի հաւասար ազնուութիւն ունի , և հարաւային բնակչաց շատերը , կարագը աժան ու առատ ըլլալուն , այս իւղը կը գործածեն , որն որ Խւրոպայի ամենէն սքանչելի իւղերէն մէկը կը սեպուի իր համեղութեանը , մաքրութելը ու զտութեանը համար : Ոչինչ նուազ առատ է բանջարեղէնն ու պտղեղէնը Գաղղիայ մէջ զորոնք արուեստով կը չորցընէն ու Խւրոպայի զանազան կողմերը կը խաւրեն : Վմէն տարի Գաղղիայէն միջին հաշուով 80 միլիոն հարիւրալիքը ցորեն կ'ելլէ , 30 միլիոն հաճար , 8 միլիոն սեացորեն , 11 միլիոն հաճարախառն ցորեն , 5 միլիոն եզիպտացորեն , 50 միլիոն վարսակ , 18 միլիոն գա

թի . Դակ գետնախնձորը իր առատութեամբը քան զամէնքը կ'անցնի , և տարին 90 միլիոն հարիւրալիդրէն աւելի կ'ելլէ . վասն զի այս նահանգները ուր ցորենը աղէկ առաջ ցիգար , գետնախնձորը իր առատութեամբը ցորենի պակասութիւնը կը լցցընէ : — Դաղղիոյ բեղմնաւոր և յուռթի գաւառներն են Խոռ-է-Խուառ , Խզն , Խոր , Խէօթ , Խոզէլ , Խէն-է-Խարն , Խէն-է-Խւազ , Սէն ստորին և Սոս . Խսոնցմէ եռքը կու գան երկրորդ կարգի բարեբեր գաւառները և են ստորին Հուենոս , Խէօզ , Խաօն-է-Խուառ , Հօդ-Խարն , Խփւրա , և այլն : — Դարին ու վարսակը աւելի հիւսիսային կողմերը կը մշակուին , ինչպէս նաև հուպոնը և ձակընդեղը : Խեացորենը Պլըդանեը գաւառին յատուկ բերքն է : Լայն ու ընդարձակ մարգագետինները մեծաւ մասմբ հիւսիսային արևմտեան կողմերը կ'իյնան , մասնաւորապէս Խորմանտիոյ մէջ : Խսաղողն ու գինին Դաղղիոյ գլխաւոր շահավաճառներէն մէկն է և տարին 40 միլիոն հարիւրալիտը գինի կը հանեն՝ որ նուազ կամ առաւել 800 միլիոն ֆրանգէն աւելի կ'արժէ : Որթի մշակութիւնը Դաղղիոյ ամէն կողմը չյաջողիր , և աւելի հարաւային գաւառները յարմար են : Խորմանտիոյ մէջ շատ առաջ գնացած է ինձորի , տանձի ու սալորի մշակութիւնը և երկրին գըլխաւոր հարստութիւնը այս բերքերս են՝ որոնցմէ օղի և օշարակ կը շինեն և գինին առատ ըըլլալուն՝ այս է բնակչաց սովորական ըմպէլիքը : Շատ պտղաբեր է այս գաւառում՝ որուն արդիւնքը բոլոր բնակչաց ճարտարագրեանն ու անխոնջ աշխատասիրութեանը կը տըրուի , ուր ընդ հակառակն եթէ այս կարգէ գուրս խնամքը ըըլլուէր՝ անջրդի ու ձախճախուտ երկիր մը պիտի սեպուեր , ՚ի բաց առեալ կիմային խստութիւնը որ ոչ փոքր քնաս կը բերէ բուսաբերութեանը : Հարաւային Դաղղիոյին տարին 70,000 հազարակամկանեփ կ'ելլէ և 35,000 բուրդ : Հիւսիսային Դաղղիոյ նոյնպէս շահաւոր

ու առատ բերքերէն մէկն է ծխախոտն ու տորոնը որ ներկարմատ մըն է : — Լիմուզէն , ()վեռնեը և Պիրենեան գաւառները առատ փայտ կը մատակարարեն , բայց ասոնցմէ Ճոխ են Խեւենեան անտառապատ լեռները՝ որոնք անհուն տարածութեամբ ու մշտնջենաւոր անտառներ են : 1700էն առաջ Դաղղիոյ մէջ անտառները շատ աւելի բազմաթիւ էին , բայց ետքէն կամաց կամաց պակսելով հիմա երկրին իբր $\frac{17}{100}$ մասը կը զբաւեն , և զիսաւոր անտառներն են Դաոմբիէն որ 14,385 հարիւրակալ տարածութիւն ունի . Ֆոնդէնը պալուինը 16,438 հարիւրակալ . Խոդերէլինը 26,847 հարիւրակալ . Հակընօինը 14,791 հարիւր . Խամապույլեէինը 12,818 հարիւր . և այլն : Դաղղիոյ երկիրը 6,000 զանազան տունկ կը բուսցընէ : 1854էն Դաղղիա 45,697,111 զանազան տեսակ կենդանի ունէր : 9,939,828 արջառեղէն՝ մէկտեղ առած կոյն ու ոչխարը և այլն : 32,151,430 հաւեղէն . 2,818,493 զանազան ցեղ երկվարք . 783,360 էշ և ջորի , և 5,000,000 ալխոզ . Ավերայ այսր ամենայնի այսչափ բազմաթիւ կենդանիք բոլոր Դաղղիոյ պիտոյիցը չեն բաւեր , ուստի հարկ կ'ըլլայ որ բազմաթիւ կենդանիք դուրսեն գնեն : Դաղղիոյ անուանի ձիերը առաւելապէս Խորմանտիոյ , Լիմուզէնի և Պլըդանեը գաւառներէն կ'ելլէն : — Ույրի կենդանի խիստ քիչ ունի , գըլխաւորներն են վարազ , գայլ , աղուէս , եղջերու , այծեամն , կասպոր , նապատակ , ճագար , և այլն . Թոչնոց մէջէն փասիան , կաքաւ կարմիր և գորշ , լոր , պարտիզահաւ , պեգաս հաւ , արծիւ , անգղ , յոսոպ , և այլն : — Ձկնեղէնք շատ առատ են ՚ի Դաղղիա , որով և գետավինեայ բնակչաց մեծ շահավաճախի գուռ , և միայն մէկ տեսակ ձուկէն որ տարեխի նման ձուկ մըն է՝ տարին 15 միլիոն ֆրանգ կ'ելլէ , 28,000 հոգի և 7,000 նաւակ նոյն ձուկը որսալու կը պարապին :

Բաժ . — Դաղղիա ըստ իւր հողային կազմութեանը զբեթէ ամէն տեսակ

Հանք ունի թէպէտ և առատ ցըլլան։ Պիրենեան ու Լոպեան լերանց ապառաժներէն կ'ելլէն աղնիւ մարմարին քարեր՝ ինչպէս գարգարա, ալաբասդր, ծարիր, բիւրեղաքար, կուանիդ, և այլն։ 80,000 հոգի միակերպ այս քարահատութուս մէջ կ'աշխատին։ — Մէտաղաց մէջ նշանաւորներն են, երկաթ՝ որ 1847ին 37 միլիոն մէտրական կենդինար հանուեցաւ։ և առ հասարակ Դազզիոյ ամէն կողմը կը գտնուի։ պղնիձ որ նոյն պէս առատ է, կապար, զինգ, ոսկի՝ բայց քիչ քանակութեամբ, աղ՝ որ տարին 600 միլիոն հազարակրամ կ'ելլէ։ — Աշանաւոր են գարձեալ Դազզիոյ հանքային ջրերը և են թուով իբր 8600 չափ, որոնց մէջ թէ եռացեալը կայ՝ թէ գաղջը և թէ յուրատը։ Լոյս հանքային ջրերուս քովերէն կ'ելլէն ծծումք ու տեսակ տեսակ քիմիական աղեր։

Լոյսայ. — Խճէպէտ Դազզիոյ բարեխառն կլիմայի տակ կ'իյնայ, 'ի վերայ այսր ամենայնի զանազան բարեխառնութիւններ ունի ըստ զրից այլ և այլ նահանգաց, ինչպէս բարձրու ցած ըլլալէն որ զգալի փափախութիւն կը պատճառէ բարեխառնութեան վրայ։ Լորդ չորս տեղական գօտի կը բաժնուի Դազզիոյ. առաջինն է երկիր ցորենոյ ըսուածը՝ որ հիւսիսային սահմաններէն առած կը հասնի մինչեւ Լանդի և Ո՞է զիկոր ուղղութեն զիծը. երկրորդն՝ երկիր այգեստանաց, թթենեաց և բան ջարեղինաց՝ որ կը սկսի Լանդի ու Ո՞է զիկոր ուղղութենէն և կ'երթայ մինչեւ Ալգրազպուրկի ուղղութեամբ դէպ 'ի արեմուտք. երրորդը՝ նոյնպէս երկիր այգեստանաց, թթենեաց, մօրացորենի և բանջարեղինաց, այս ալ նախընթաց գաւառներուն ստորին սահմաններէն առած կ'երթայ մինչեւ Լուընոսլի ու Փերփինեանի ուղղութիւնը. չորրորդն է՝ երկիր ձիթաստանաց, թթենեաց, այգեստանաց. որ մնացած ամբաղջ հարաւային մասը կը պարունակեն։ — Դազզիոյ օդը 'ի հասարակի քաջառողջ է։

Կը շարունակորի:

Հօրտ Մաքաղէ:

Ենցեալ տարուան գեկտեմբեր ամսուն Լոգզիա անձ մը կորօնցուց, ուրուն կեանքը իր հալիենեացը փառքն էր և իր տարաժամ մահը իր ամէն ազգայիններուն ընդհանուր սգոյ նիւթեղաւ։

Լորտ Մաքաղէ վաթսուն տարեկան հասարակին գերեզման իջաւ յետ մեծապէս փառաւորուելու իբրև քաղաքագէտ ու իբրև մատենագիր. մարդկային կեանք մը ասկէ աւելի փառաց գժուարաւ կրնայ հասնիլ։ Լոյս պատկառելի գերեզմանին զիմաց, զօր մահուան լուութիւնը ալ աւելի վսեմութեան քօղով մը հիմա կը ծածկէ, արժան է աս մեծ անգղիացւոյն յիշատակին քանի մը խօսք ըսել և զինքը ծանուցանել մեր ընթերցողաց։

Լորտ Մաքաղէ ան տեսակ մատենագիրներէն էր, որ մոգիչ հանձարովը իր ունկնդրաց վրայ կը տիրապետէր, իրեն աս լուծէն խալսուիլն անկարելի էր։ Լոյսուն հմտութիւն ունէր ու միանգամայն խօսակցութեան այնպիսի տուրք մը, որ խօսքով գժուարին է որոշ գաղափար մը տալ։ Տեղեկութեց այդ հիանալի առատաբուզիս հոսանքը լիամեռն կը սփռէր իր ձաւերուն, իր գրուածքներուն ու իր խօսակցութեանցը մէջ, այնպէս որ կամայ ու ակամայ իր ունկնդրը թովեալ կը մնար ու չէր զիտէր թէ աւելի որմէն վրայ զարմանայ, արգեօք անոր անբաւ ծանօթութեանցը ընդարձակութեանը վրայ, թէ չէ զանոնք հիանալի կերպով բացատրելուն ու գուրս ցատքեցընելուն։ Լոյսզիոյ պատմութեան աղբիւրներուն խորին հմտութիւն ունէր Լինկըրտին¹. չափ, գրութեան ոճովը անկէ ալ վերէր, միայն անոր պէս անկողմնասէր ու

¹ Լինկըրտ անգղիացի պատմագիր առ գարուս մէջ. շատ մանր մունր գրուածքներէն զատ իրեն էրևելի գործքն է Պատմութիւն Անգղիոյ. Հռամայեցոց առաջնին արշաւանքներէն ինչուան 1688 տարւոյն Անգղիոյ յեղափոխութիւնը.